



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHÉGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՐՁԱԽԻ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԳՕ ՍԱՅԱԿԵԱՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՊԱՐԳԵՒ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՇԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Տարիներու բարի աւանդութեան համաձայն, Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան նախագահ Բագօ Սահակեան եւ Վրցախի Թեմի Առաջնորդ Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան հանգանակային ծերնարկին՝ թելեթոնին արիթով Լու Անձելըս կը գտնուեին Նոյեմբերի նախավերջին շաբաթը. Նմանապես բարի աւանդութիւն է, որ նախագահն ու Առաջնորդ Մրբազանը այցելութիւն տային Ազգային Առաջնորդարան եւ Վերանորոգեին Վրցախ-հայրենիքին հետ մեր Թեմին կապերն ու սերտակցութեան ուխտը:

Այս աւանդութեան նորագոյն եջը արձանագրուեցաւ Երեքշաբթի, 22 Նոյեմբերի կեսօրին: Արդարեւ, նախագահ Բ. Սահակեան, Պարգեւ Մրբազան եւ անոնց ընկերացող պաշտօնական պատուիրակութեան անդամները Ազգ. Առաջնորդարան ժամանեցին յետմիջօրէի ժամը 2ին եւ շուրջ երկու ժամ եղան հիւրերը Թեմիս բարեինամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու ժողովականութեան անդամներուն: Պատուիրակութեան մաս կը կազմէին Տեարք Դաւիթ Պապայեան եւ Ռոպէր Աւետիսիւեան, յաջորդաբար՝ նախագահի լրատուական գրասենեակի տևորէնը եւ Ուաշինկոնընի մօտ Վրցախի Ներկայացուցիչը: Ճաշի սեղանի շուրջ ընթացող հանդիպումին Ներկայ ու մասնակից էին Մեծի Տան Կիլիկիոյ Միաբանութեան Երեց անդամներէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, Թեմիս Կրօնական ժողովի ատենապետ Գերա. Տ. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսէեան, հիւպատոս Մեսրոպ Շապոյեան, Ա. Աթոռոյս Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Վահե Եագուպեան, Ազգ. Վարչութեան ատենապետուի Տիկին Ռիմա Պողոսեան եւ Վարչութեան անդամներ, «Հայաստան» Հիմնադրամի Լու Անձելըսի բաժանմունքի Վարչութեան Տիար Արք Ակիշեան, փոխ ատենապետ Տիար Գօգօ Պալեան, ինչպես նաեւ ՀՕՄի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տիկին Վիգի Մարաշլեան, ՀՕՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջ. Վարչութեան ատենապետ Օր. Նայիրի Տերտերեան, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի Ներկայացուցիչ Տիկին Մակի Սարգունի եւ այլ հիւրեր:

Առաջնորդ Սրբազնը, գլխաւոր հիպատոսն ու ժողովականութեան Ներկայացուցիչները յարգելի հիւրերը դիմաւորեցին Ազգ. Առաջնորդարանի մուտքին. անոնք միասնաբար բարձրացան ք. յարկ, ուր համախմբուած էին հիւրերն ու վարչականները: Դահլիճի մուտքին, տեղի ունեցաւ կարճատել հիւրասիրութիւն, որուն ընթացքին, Առաջնորդ Սրբազնը ողջոյնի խօսք ուղղեց նախագահին, Արցախի Առաջնորդին ու հիւրերուն:

Ճաշի հիւրընկալումն ու մտերմիկ հանդիպումը տեղի ունեցան «Սիլահեան» դահլիճին մէջ: Ճաշի պատրաստութիւնն ու հիւրասիրութիւնը յանձն առած էր Ազգ. Առաջնորդարանի Տիկինաց Օժանդակ Մարմինը:

Ստեղծուած մտերմիկ մթնոլորտին մէջ, ողջոյնի ու սրտի խօսքեր արտասանեցին Առաջնորդ Սրբազնը, Ազգ. Կեդրոնական Վարչութեան Ներկայացուցիչը, Ազգ. Վարչութեան ատենապետուիի Տիկին Ռիմա Պօղոսեան, Ազգ. Առաջնորդարանի Տիկինաց Օժանդակ Մարմինի ատենապետուիի Տիկին Սալբի Մրուրեան, «Հայաստան» Հիմնադրամի տնօրինը, Յայր Միւռոն եւ ՅՕՍԻ Կեդր. Վարչութեան ատենապետուիին: Անոնք կանգ առին Գոհաբանութեան տօնի խորհուրդին վրայ, շեշտեցին թելեթոնին կարեւորութիւնն ու յատուկ դերը՝ հայրենիքին նուիրաբերելու հայութեան պատրաստակամութեան թարգմանը ըլլալու իմաստով, ու գնահատանքով արտայայտուեցան, որ այս տարուան հանգանակային արշաւը ունի յստակ նպատակ մը՝ կենսատու ջուր ապահովել բնակչութեան ու երկրագործներուն: Տիար Վահէ Եագուպեան անդրադարձաւ Անթիլիասի կաթողիկոսութեան ու Արցախի միջեւ ստեղծուած յատուկ կապերուն ու գործակցութեան, յիշեցնելով, որ կաթողիկոսութիւնը, իր թեմերուն հետ գործակցաբար, յանձն առած է «Նոր Կիլիկիա» գիւղին վերանորոգումը: Տիկին Ռ. Պօղոսեան յարգանքի խօսք ուղղեց Արցախի հերոս Ժողովուրդին, որ հակառակ բազմապիսի դժուարութիւններու՝ կառչած կը մնայ հայրենի հողին. Արցախի ժողովուրդին զօրակից ու աջակից ըլլալու տրամադրութեանց արձագանգ եղան Տիկին Վ. Մարաշլեան, Յայր Միւռոն եւ Տիար Արա Ակիշեան:

Առաջնորդ Սրբազնը Արցախի պետական ու հոգեւոր դեկավարներուն փոխանցեց Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսի ողջոյններն ու գործակցութեան զարգացման տրամադրութիւնները, յիշեցնելով, որ նախագահ Սահակեանի Լիբանան այցելութեան օրերուն, Վեհափառ Յայրապետը հիւրընկալած էր զայն: Այս առիթով, Առաջնորդ Սրբազնը յատուկ յուշանուերներ յանձնեց յարգելի հիւրերուն. յուշանուերները պատրաստուած էին ամիս մը առաջ տեղի ունեցած հովուապետական այցելութեան առիթով: Ան նկատել տուաւ, որ հայութիւնը անսահանչ կերպով պիտի շարունակէ զօրակից ըլլալ Արցախին ու մայր հայրենիքին, անհամարհելով առօրեայէն ու աշխարհին վիճակուած անսպաստ պայմաններէն բխող դժուարութիւններն ու խոչընդոտները: Վերջապէս, Առաջնորդ Սրբազնը գնահատանքի ու շնորհակալութեան խօսք ուղղեց Տ.Օ.Մարմինին, որ սիրայօժար յանձն առած էր հիւրընկալումը:

«ԽԻՉԱԽՈՒԹԻՒՆ՝ ԲԱՐԻՔԻ ԾԱՄԲՈՎ»

Յանդիպումին եզրափակիչ խօսքը արտասանեց Նախագահ Բ. Սահակեան: Ան յիշեցուց, որ անցեալ տարիներուն քանից գտնուած է այս յարկին տակ, որ հարազատ է իրեն ու ինս կը զգայ Արցախին հետ միասնութեան ոգին: Խօսելով Արցախի կերտած նուաճումներուն մասին, ան նկատել տուաւ, որ Արցախ այցելողները ականատես կ'ըլլան բարգաւաճման այն ուղիին, որ կը կերտուի անսահանջ կերպով, եւ որուն համար ան շնորհակալութեան խօսք ուղղեց համայն հայութեան, որուն կը պատկանի հայրենի երկիրը: Նախագահ Սահակեան վեր առաւ մեր եկեղեցոյ բարերար դերը՝ մեր ժողովուրդի կեանքին մեջ, յատկապես ընդգծելով դեպի բարիին առաջնորդելու անոր առաքելութիւնը. ան շեշտեց, որ խիզախութեամբ յառաջ տարրուող ու յաղթանակներ ապահովող պայքարը կը բխի բարիք, որովհետեւ առանց բարիին, խիզախութիւնը թերի է:

Արցախի Նախագահը դրուատիքով խօսեցաւ ՀՕՄԻ հայրենանուեր աշխատանքին մասին, յոյս յայտնելով, որ գործակցութեան դաշտերը ընդարձակուին ապագային: Ան նաեւ գոհունակութեամբ արտայայտուեցաւ Անթիլիասի Կաթողիկոսութեան հետ ստեղծուած կապերուն ու գործակցութեան մասին, նշելով, որ Արամ Ա. Կաթողիկոսը հրաւիրուած է Շուշիի ազատարգութեան 20ամեակի հանդիսութիւններուն, որոնք Նախատեսուած են յառաջիկայ տարի:

«Մեր յաղթանակները տակաւին չեն աւարտած, այնքան ատեն, որ Արցախի հարցը իր արդար լուծումին չէ հասած», յայտարարեց Նախագահը, եւ յոյս յայտնեց, որ զսպուածութեամբ ու հետեւղականութեամբ՝ պիտի յաջողիկը հասնիլ վերջնական ու բաղձալի լուծման:

Շուրջ երկու ժամ տեւած մտերմիկ հանդիպումի աւարտին, Ներկաները խմբանկար մը ուսեցան Ազգ. Առաջնորդարանի մուտքի կամարին տակ:

## PRESIDENT AND PRIMATE OF ARTSAKH VISIT THE PRELACY

On Tuesday, November 22, 2011, President of the Nagorno-Karabakh Republic His Excellency Bako Sahakyan and Prelate of Artsakh H.E. Archbishop Barkev Martirosyan paid an official visit to the Prelacy where they were welcomed by Prelate H.E. Archbishop Moushegh Mardirossian, Councils, and Prelacy and community representatives.

NKR President's Press Officer Davit Babayan, NKR representative in Washington Robert Avetisyan, Consul General of Armenia Grigor Hovannissian, and Consul Mesrob Shaboyan, accompanied the honored guests, who are in Los Angeles for the annual Armenia Fund Telethon.

Joining the Prelate were H.E. Archbishop Yeprem Tabakian, Very Rev. Fr. Muron Aznikian, Central Executive member Mr. Vahe Yacoubian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian and Council members, Armenia Fund Chair Mr. Ara Aghishian, Vice-Chair Mr. Koko Balian, ARS Central Executive Chair Mrs. Vicky Marashlian, ARS Regional Executive Chair Ms. Nyree

Derderian, Board of Regents members Mrs. Maggie Sarkuni, and members of Prelacy committees.

Upon their arrival the guests were escorted to the second floor lobby for a reception, after which they were hosted to a lunch reception at the "Sulahian" Reception room. The lunch was prepared and hosted by the Prelacy Ladies Auxiliary.

Welcoming remarks were delivered by the Prelate, Mr. Yacoubian, Mrs. Boghossian, Ladies Auxiliary Chair Mrs. Salpi Srourian, Mr. Aghishian, Fr. Muron, and Mrs. Marashlian, all of whom spoke on the true meaning of the Thanksgiving holiday and the importance of the Armenia Fund Telethon which this year will benefit the development of modern drinking and irrigation water systems in Armenia and Nagorno Karabakh. Mr. Yacoubian also highlighted the collaboration between the Catholicosate of Cilicia and Artsakh, noting that the Catholicosate with its Dioceses has undertaken the development of the "Nor Giligia" village. Mrs. Boghossian addressed her remarks to the heroic people of Artsakh who, in spite of innumerable difficulties, remain in their homeland and remain committed to its progress.

The Prelate conveyed the greetings of His Holiness Catholicos Aram I and the sentiments of His Holiness to expand the collaborative efforts of the Catholicosate and our homelands, noting that during his trip to Lebanon, President Sahakyan was welcomed and hosted by His Holiness. The Prelate then presented the honored guests with mementos from the recent Pontifical visit of His Holiness. In conclusion, the Prelate emphasized that the Armenian people will unwaveringly support Artsakh, no matter the economic difficulties we and the world may face.

President Sahakyan was then invited to deliver his message.

The President began by saying that he visits the Prelacy each year and here he feels a spirit of unity with Artsakh. President Sahakyan reflected on the advancements the country has experienced which he said is owing to the united support of Armenians worldwide. His Excellency highlighted the invaluable role of the Church and its mission to guide our people towards the righteous path, and noted that our struggle is a righteous one that arises from good. The President also commended the contributions of the ARS to the progress of the country and expressed appreciation for the collaboration and bond with the Catholicosate of Cilicia, noting that His Holiness Aram I has been invited to participate in the 20<sup>th</sup> anniversary of the liberation of Shushi which will be held next year. In conclusion, President Sahakyan stated that our victories are only temporary until the Artsakh situation is resolved justly, and expressed hope for a favorable final resolution to the conflict.